

լէն ելած առասպել է :

Շատ երկայնամտութիւն կը բանեցընէ՝ հիւսիսը իր որսը գտնելու համար, ու երբեմն երկար ատեն անշարժ կծկըտած կը դարանի : Կրնայ դիւրաւ ընտանենալ, ու տան մէջ կատուի տեղ գործածուիլ՝ մկները ջարդելու համար . և ընտանենալէն ետքը իրեն բնական տունը շատ կը սիրէ, ու զինքը կը թողնէրուն կը հընազանդի : Եւ դին ան դին չալտրտիր, ու չուզեր նորէն իրեն վայրենի վիճակը դառնալ . երբոր կորսուելու ալ ըլլայ, իր առջի տէրը կամ տունը կը փնտրուէ կը գտնէ ու կը սկսի քրծնիլ : Իայց կերակուր կերած ատենը իր անուշութիւնը կը կորսունցընէ . մէկ անկիւն մը կը քաշուի, ու թէ որ կասկածի թէ որսը ձեռքէն պիտի առնեն՝ սաստիկ կը կատրի : Իսկ որ իրեն մէկ չճանցած տեղը երթայ, ամէն կողմերը կը քննէ, մանաւանդ իր հոտառութեամբը՝ որ մէկալ ըզգայարանքներէն աւելի զօրաւոր է :

Հիւսիսն գոյնը սև է՝ ձերմակ բծերով, մաշերը խիտ ու չոր : Կանջներէն ինչուան պոչին արմատը մէկ ոտնաչափէն աւելի չէ . ականջներուն ետեւի կողմէն ինչուան քթին ծայրը իրեք բթաչափէն քիչ մը աւելի է . պոչը մէկ ոտք ու չորս բթաչափ է, իսկ բարձրութիւն է եօթը բթաչափ :

Բնաբանները շատոնց գիտէին հիւսիսն անունը, բայց իր ստորագրութիւնը որոշ չէին կրցած ընել ինչուան մօտ տարիներս . անոր համար շատը այլևայլ անուն ալ կուտան ասոր ինչուան հիմա :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Հաճար :

ՀԱՃԱՐԸ՝ խիստ օգտակար արմրտիքներէն մէկն է . մէյմը որ տնական տնտեսութեան մէջ շատ կը գործածուի, մէյմըն ալ որ ան երկիրներուն մէջ՝ ուր որ ցորենը ամենեւին առաջ չգար, կամ խիստ քիչ կը բուսնի, հաճարը աղէկ կը մեծնայ և առատ բերք կուտայ : Եւ որ հունտը թէպէտ և ցորենին պէս ձերմակ ու անոր չափ անընդարար չէ, բայց ասկէ ալ շատ աղէկ ու համեղ հաց կը շինուի ու երկայն ատեն թարմ կը մնայ, մանաւանդ երբ որ ցորենի ալիւրին հետ խառնուի . և աս հացը ոչ միայն մարդիկ կ'ուտեն, հապա տեղ տեղ ձիերու ալ կը կերցընեն . երբեմն ալ խոշոր աղալէն ետքը՝ այլևայլ չափով կը խառնեն նոյնպէս խոշոր աղացած վարսակի, գարիի, սիսեռի, ոսպի ու բակլայի ալիւրին հետ, և այնպէս կը գործածեն : Հաճարը կը գործածուի նաև հաւերը գիրցընելու, և օղի ու գարեջուր շինելու :

Հաճարը քանի որ թարմ է՝ կանաչ խոտի տեղ կրնայ տրուիլ կենդանեաց, մանաւանդ յոգնած ձիերուն ու կաթընտու կովերուն . իսկ հաճարին յարդը հունտէն աւելի յարգի է, ու կը գործածուի կենդանեաց ոտքին տակը փռելու, և ոչխարներուն՝ կովերուն ու եզներուն կերցընելու . ասկէ կը շինեն նաև խսիրներ, աթոռներ ու գլխարկներ, և նաև տնակներու ծածքեր :

Հաճարին յարմար կողերը : — Հաճարին յարմար հող գտնելը ցորենինէն աւելի դիւրին է . կրնանք ըսել թէ որ և իցէ հող երբոր չափազանց խոնաւ

չէ՛ մէջը հաճար կրնայ ցանուիլ։ Աւելի աղէկ առաջ կուգայ հաճարը կաւախառն աւազոտ երկրի մէջ, բաւական է որ պարարտ ու խոր հերկած ըլլայ։ Կրնայ ցանուիլ նաեւ պարզ աւազոտ ու կաւճոտ երկրի մէջ ալ, որ այսպիսի հողերու մէջ ուրիշ բոյսեր զրեթէ չեն ցանուիր։ — Ուրիշ արմտիքներուն չափ ալ խոնաւութիւն չուզեր։ Վասն զի շուտ աճելով ու հասունանալով՝ տնկուած երկրին վրայ շուք կ'ընէ, անով ամառուան սաստիկ տաքերէն ալ շուտով չորնար։ Ոճր ցորենինէն աւելի ճռզած, հունտն ալ անկէ աւելի թեթեւ ըլլալով՝ շատ պարարտ հող ալ հարկաւոր չէ։ Եւ նոտ երկիր ալ, ուր որ ուրիշ արմտիքները գրեթէ չեն հասուննար՝ բաց 'ի գարիէն, հաճարը շատ աղէկ կը հասնի։ Իսկ դաշտային երկիրներու մէջ այնչափ շուտ կը հասուննայ, որ քաղելէն ետքը կրնաս տեղը անասնոց համար կթհողուն մէջ թաղելու համար խոտ մը ցանել։ Նոյն ալ ամենեւին չառնուիր. անանկ որ հիւսիսային կողմերը ինչուան բւեռային շրջանակներուն մօտերն ալ սաստիկ ու երկայն ձմեռներու մէջ խիստ աղէկ առաջ կուգայ։

Հողը պարարտութեան վրայ։ — Ինչ որ զուրցեցինք ցորենին համար, նոյն բանը իմանալու է ընդհանրապէս նաեւ հաճարին համար։ Դիտելու բանը աս է որ հաճարի արտը պէտք է աւելի աղէկ հերկած ըլլայ, մանաւանդ երբ որ հողը կաւոտ է։ — Սարուցանի կարգին մէջ ցորենին տեղը կը ցանուի հաճարը։ Կրնաս նաեւ առջի տարին խոտ ցանած տեղերդ ալ ցանել, մանաւանդ առուոյտ ցանելէն ետեւ։ Քիչ պարարտութիւն ունեցող երկիրներուն մէջ ալ հաճարը առաջ կուգայ։ Բայց որպէս զի յարգն ու աւելորդ աղէկ ըլլան՝ չափաւոր պարարտութիւն պէտք է։ Սիջակ պնդութիւն ունեցող, թեթեւ, աւազոտ ու կրօտ հողերու մէջ խառնելու աղբերը հաճարին ալ աղէկ կը յարմարին։

Հոնաբը ընտելու վրայ։ — Գորենին համար զուրցածնիս ասոր համար ալ իմանալու է։ Միայն թէ ասիկայ կրօտելու սովորութիւն չկայ, թէպէտ և շատին աղէկ կ'երեւնայ՝ զանազան հիււանդութիւններէ պահելու համար։

Յանելու հոնաբին չափը եւ ցանելու առիթը։ — Որոշ չափ մը չկայ։ Ընդհանուր կանոնը աս է որ գէշ հողերու մէջ աւելի շատկեկ ցանելու է։ — Սովորաբար ձմեռուան հաճարը ցորենէն առաջ կը ցանուի։ Թէ լեռնոտ և թէ դաշտային երկիրներու համար՝ խիստ կանուխ ցանելը աղէկ չէ։ որչափ որ բոյսը երկար ատեն հողու մէջ մնայ, այնչափ ալ առատ կ'ըլլայ հունձքը։ Եւ արծր լեռներուն վրայ օգոստոսի կը ցանուի։ Իսկ բարեխառն երկիրներ սեպտեմբերի մէջ։ Թէպէտ և ձիւն ալ գայ՝ հաճարը կը բուսնի, բաւական է որ սառոյցը հողուն ներսը թափանցած չըլլայ։ Հարաւային կողմերը պէտք է որ ցանը ինչուան սեպտեմբերի վերջերը լմննայ, որպէս զի հոկտեմբերի, նոյեմբերի ու դեկտեմբերի անձրեւներովը արմատները զօրանան, ու ապրիլի՝ մայիսի մէջ եղած տաքութեան ու չորութեան դէմ կարենան դնել։

Վարնան հաճարը միայն ան լեռնոտ երկիրներուն մէջ կը մշակուի, ուր տեղ որ աշնան հաճարը այլեւայլ պատճառներով առաջ չգար։ Ինչպէս ուրիշ մարտի արմտիքները, ասանկ ալ հաճարը աշնանայինին չափ հունձք չտար։ Բայց շատ անգամ հատիկները առջինին չափ մեծ ըլլալուն՝ շատ տեղ կը ցանեն։

Յանելու երաբը։ — Հաճարը միշտ սփռելով կը ցանուի, և ետքը տափանով կը ծածկուի, նայելով որ շատ խոր չթաղուի՝ որ ծլելուն արգելք չըլլայ։ ցանուած հաճարը խիստ շուտով կը փտտի ու կը ծլի։ Նոյն տեղը անգամ նոյն տեղույն վրայ ետեւէ ետեւ ցանելով ալ շատ աղէկ հունձք կուտայ։ Շատ անգամ կը յաջողի որ յուլիսի կամ յունիսի ցանածդ շուտով

կը ծլի . աս ծլածը քսան բթաչափ մեծ նալէն ետքը , ցուրտը չկոխած՝ քանի մը անգամ կրնայ հնձուիլ ու կենդանեաց տրուիլ . մնացած արմատները նորէն կը ծլին ու ատենին առատ հունձք կուտան : Սմանք փորձեր տեսեր են որ ցորենով խառնուած հաճարը աւելի աղէկ առաջ կուգայ՝ քան թէ զատ զատ ցանուածը : Սմանք աս առարկութիւնս կ'ընեն թէ ցորենը ուշ կը հասնի , իսկ հաճարը շուտ : Բայց վերը զուրցեցինք թէ հաճարը որչափ որ հողուն մէջ մնայ՝ այնչափ աղէկ կ'ըլլայ : (Դ)ՈՂ որ աս երկու արմտիքներէն բաղադրուած հացն ալ շատ համով կ'ըլլայ :

{ } Երէնի ու յարդի օրանները հայծալէ պահելու հերպ :

ԵՐԿՐԱԳՈՐԾՆԵՐԸ ցորենը հնձելէն ետքը որայ որայ կ'ընեն ու դաշտի մէջ վրայէ վրայ կը դիզեն . աս դէզերը օրան կ'ըսուին : Սովորաբար օրանին մէջտեղը երկայն ցից մը կը տրնկեն , որուն վերի ծայրը խել մը տեղ օրանէն դուրս ցցուած կը մնայ . և որովհետեւ աս ցիցին ծայրը սուր է , օդուն մէջի ելեքտրականութիւնը , կամ թէ ըսենք կայծակը , դիւրաւ իրեն կը քաշէ , անով շատ անգամ օրաններուն կայծակ կը զարնէ ու մոխիր կը դարձնէ : Եւ բանիս ճար մը ընելու համար՝ մարդուն մէկը մտածեց , թէ որովհետեւ խէժոտ ծառերը , ինչպէս են եղեինը¹ , փիճին² և ուրիշները ամենեւին ելեքտրականութիւն չեն կրնար հաղորդել , իր օրաններուն մէջ աս ծառերէն շինած ցիցեր տնկել տուաւ : — Բայց թէ որ մէկը ան ծառերէն չունի նէ , կրնայ առնուլ հասարակ փայտէ ցից մը , ու ան կտորն որ օրանէն դուրս պիտի մնայ՝ կուպրով³ օծել ու նայիլ որ ան

ցիցին ծայրը սուր չըլլայ , հապա տափակ . յետոյ մէկ ապակէ գաւաթ մը առնէ տաքցնէ , ու մէջը հալած ձիւթ ու ծեծած աղիւս՝ լեցնէ , ետքը ան գաւաթը դտակի պէս ցիցին ծայրը անցնէ՝ քանի որ մէջի նիւթը տաք է : Եւ որովհետեւ թէ ապակին և թէ խէժը անհաղորդական են ելեքտրականութեան , անով ամենեւին կայծակ չզարներ օրաններուն :

ՕԴՏԱԿԱՐ ԳԻՒՏԵՐ

Նոր հերպով շինած աղիւս :

ՖԱՐԷՅ անունով արուեստագետ մը Լոնտրայի արուեստից ընկերութեանը առաջարկեց նոր կերպով աղիւս շինելու հնարք մը : Եւ է աս . նախ և առաջ աղիւս շինելու կաւը փռան մէջ կը չորցնէ կը մանրէ ու բարակ փոշի կը դարձնէ : Որովհետեւ կաւը որչափ ալ չորցնելու ըլլանք մէջը միշտ խոնաւութիւն կը մնայ , անոր համար աս փոշին սաստիկ ուժով կը ճզմէ որ մէջի եղած խոնաւութիւնը կաւին փոշի դարձած մասունքը իրար կրնան բռնել : Եւ կէ ետքը փռան մէջ կ'եփէ հասարակ աղիւսի պէս : Եւ կաւը ճզմուելովը արդէն խտացած ըլլալով , կրակի մէջ ալ մասունքը կը քաշուին , ու հասարակ աղիւսէն խիստ շատ աւելի պինդ կ'ըլլայ : Եւ կերպով շինուած աղիւս մը ներկայացուց ժողովոյն . անոնք ալ փորձեցին տեսնել որ 9 հազարամեթր հաստութիւն աղիւսի վրայ 90 տակառաչափ ծանրութեամբ մը զարնելով , աղիւսին և ոչ բարակ ծայրերը փշրեցան : Հնարողը կը խոստանայ որ ջրային մեծկակ մամուլով մը աս կաւը ճզմելով , ավել ետքը մեծամեծ աղիւսներ պիտի կարենայ շինել՝ ամէն շինուածքի յարմար՝ թէ ձեւով և թէ հաստութիւն :